ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ.

ԱՐԱՐԱՏ ԱՄՍԱԳԻՐ

ԿՐՕՆԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ.

Վերոյիշեալ Հայրապետի բարի ցանկութեան և կամքի համաձայն՝ առաջիկայ 1888 թուականից սկսած Արարատ ամսագիրը թէ իւր բովանդակութեան և թէ դիրքի կողմանէ ենթարկուելու է փոփոխութեան։ Այդ Աթոռոյս միաբանութեան հետ հրաւիրուում են աշխատակցելու Արարատին և Ռեմարանի ուսուցչական խումբն, ինչպէս և ազգիս մէջ ամենուրեք գտանուող բանասէր գիտնական և ուսումնական անձինք, որոնք հետաքրքրուում են ազգային պատմութեան, գրականութեան, ազգային եկեղեցւոյ և եկեղեցական դասի վիճակին, ինչպէս և հոգևոր ծխական դպրոցների բարեկարգութեան վերաբերեալ նիւթերով։ Արարատը կբովանդակէ իւր մէջ և ընտիր քարոզներ ու բարոյական գրուածքներ, ինչպէս և համառօտութիւնք թէ Աստուծոյ Օծութեան և թէ Ս. Մինասի պաշտօնական կարգադրութեանց, որոնք կվերաբերին հայ եկեղեցական դասին և հայ դպրոցներին։ Հաղորդումն տպագրելս և ամեն տեղերի ազգայնոց մասնաւոր և բարոյական վիճակին վերաբերեալ տեղեկութիւնք թէ ազգային հրատարակութիւններից և թէ թղթակցութիւններից քաղուածօրէն։ Խմբագրութիւնս յոյս է տածում, որ հայ բանասէրք չեն զլանալ իւրեանց գործակցութիւնն, որ Ս. Աթոռոյս ամսագիրը կարող լինի ճշգիւ ծառայել իւր նպատակին,

որ է մուտաւոր և բարոյական կերպակուր տալ իւր ընթերցողաց, մանաւանդ եկեղեցականաց, որոց մեծամասնութիւնն կարօտ է թէ գիտութեան և թէ զեկավարութեան իւր պարտքը դէպի Աստուր Նկեղեցին և դէպի իւր Հօտը սրբութեամբ կատարել կարողանալու համար։

Աբարատի խմբագրութիւնը, Ազգին Օծութեան Հրամանի համեմատ, պարտաւորվում է հրատարակութեան յարմար համարուած յօդուածների իւրաքանչիւր տպագրական թերթի համար վարձատրութիւն վճարել 25—40 ռուբլի, եթէ յօդուածագիրը այդ կըցանկայ։ Յօդուածների ընտրութիւնն և վարձատրութեան քանակութեան որոշումն կպատկանի մանաժողովին, որ հրամանաւ Ազգին Օծութեան կըկազմուի։

Աբարատը կհրատարակուի ամիսը մի անգամ. բաժանորդագինը տարեկան է և սկսվում է Յունվար ամսից. բաժանորդագինն է Ռուսաստանում՝ 4 ր. Տաճկաստանում, Պարսկաստանում և Եւրոպայում 5 ր. իսկ Հնդկաստանում և Եգիպտոսում 6 ռուբլի։ Այսպէսակ գաւառներում և քաղաքներում ստորագրուել ցանկացողք թող դիմեն տեղական Հոգ. իշխանութեան գործակալներին կամ ուղղակի Ս. Էջմիածին։ Հայէն՝ Эчміадзинъ Типогр. Комитетъ—Տպարանական Խորհուրդ։